Հարգելի գործընկերներ՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովը (այսուհետ՝ ՄՀՀ), որը հիմնադրվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհրդի 2002 թվականի ապրիլի 26-ի նիստի որոշմամբ՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի /ԳՀ/համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրային առաջարկի հաստատման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ընթացիկ գերակայող ռազմավարությունների որոշման, ԳՀ ֆինանսական միջոցների բաշխման ու շարունակական հսկողության իրականացման նպատակով, ավարտել է իր աշխատանքները, և շուտով կայանալու են նոր ընտրություններ։

Նման ՄՀՀ-ներ գործում են գրեթե բոլոր երկրներում, որտեղ ԳՀ-ն սկսել է իր աշխատանքները և տրամադրել է ֆինանսական աջակցություններ։

Նախկին ՄՀՀ կազմում ընդգրկված են եղել պետական, միջազգային և տեղական ՀԿ-ների, ինչպես նաև ՄԻԱՎ-ով և ՏԲ-ով ապրող համայնքների ներկայացուցիչներ և / կամ այդ անձանց շահերը ներկայացնող ՀԿ-ների ներկայացուցիչներ, սակայն բացակայել են SUS[1], Տրանս[2], ԹՆՕ[3] և ՍԾԿ[4] համայնքների ներկայացուցիչներ, ովքեր կպաշտպանեն տվյալ համայնքների շահերը և ձայնը կդարձնեն լսելի։

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, զբաղվելով իրավապաշտպան և առողջապահական գործունեությամբ, խորհրդակցելով «Տղամարդկանց առողջության Եվրասիական կոալիցիայ»-ի /ECOM/ հետ, մշակում է ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է՝

[1] Տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ
[2] Տրանս մարդիկ
[3] Թմրամիջոց ներերակային օգտագործողներ
[4] Սեռական ծառայություն մատուցող կանայք

- Մշակել փաստաթղթային առաջարկ ՄՀՀ կազմում թիրախային խմբերի ներգրավման համար,
- Կազմակերպել ՄՀՀ կազմում Թիրախային Խմբերի ներկայացուցիչների ընտրությունների թափանցիկ և հասանելի անցկացման գործընթաց,
- Բարձրացնել ՄՀՀ կազմի պետական կառույցների ներկայացուցիչների տեղեկատվական մակարդակը խարանի, խտրականության, ինչպես նաև սեռականության ու գենդերային ինքնության վերաբերյալ:

Սույնով հրավիրում ենք բոլոր շահագրգիռ անձանց ծրագրային փաթեթի նախնական աշխատանքային քննարկմանը մասնակցելու համար:

Մասնակցելու համար խնդրում ենք գրանցվել **այստեղ**:

Գրանցված մասնակիցներին կուղարկվի հանդիպման անցկացման վայրի և օրվա վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն:

Լավագույն ցանկություններով՝

Սերգեյ Գաբրիելյան

Հայաստան | 0002 Երևան | Թումանյան 41, բն. 4 | Հեռ: +374 60 378989; +374 60 478989
Էլ-հասցե. sergeigabrielian@gmail.com | http://ngngo.net